

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2011 թ. մայիսի 2-6-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած ֆինանսների վիճակագրության ձեռնարկի և ազգային հաշիվների համակարգի կապերի վերաբերյալ դասընթացին,
- ✓ 2011 թ. մայիսի 9-13-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի պետ Ա. Պետրոսյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Վ. Արևշատյանը մասնակցել են ք. Բուդապեշտում (Հունգարիա) կայացած «Գյուղատնտեսական արտադրության և առևտրի վիճակագրություն» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. մայիսի 16-18-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Միգրացիա և դրամական փոխանցումներ» խորագրով խորհրդաժողովին,
- ✓ 2011 թ. հունիսի 6-9-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը մասնակցել է ք. Կիևում (Ուկրաինա) կայացած «Հավասարակշռված և առողջ քաղաքային տրանսպորտի զարգացման համար համագործակցություն» թեմայով սեմինարին,
- ✓ 2011 թ. հունիսի 6-10-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը և առաջատար մասնագետ Կ. Ավետիսյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Միջազգային համադրումների ծրագիր» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2011 թ. հունիսի 14-16-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 59-րդ հերթական լիակազմ նստաշրջանին,

- ✓ 2011 թ. հունիսի 20-21-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը մասնակցել են ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «ՏրանսՄոնետե ծրագիր» թեմայով հանդիպմանը,
- ✓ 2011 թ. հունիսի 20-21-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Աթենքում (Հունաստան) կայացած «Որակի հարցերը վիճակագրությունում» խորագրով բարձր մակարդակի սեմինարին,
- ✓ 2011 թ. հունիսի 27-ից հուլիսի 1-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Հաղորդակցումը վիճակագրությունում» թեմայով աշխատանքային նիստին և «Մարդահամարի տվյալների տարածում և հաղորդակցում» թեմայով հանդիպմանը: